ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 15.01.2014թ. թիվ 01/7-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ» ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի և Մարտուն Փանոսյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի 15.01.2014թ. թիվ 01/7-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման» կարգում **(այսուհետ նաև Կարգ)** փոփոխություններ կատարելու մասին հարցը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի և 5-րդ մասի պահանջներով, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1) Կարգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- *2.2 կետում «քսան» թիվը փոխարինել «տասը» թվով.*
- *2.3 կետում «տասնհինգ» թիվը փոխարինել «հինգ» թվով.*
- *4.7 կետի առաջին նախադասությունում «աշխատանքային» բառը հանել.*
- *4.8 կետում «աշխատանքային» բառը հանել:*

2) *Սահմանել, որ սույն որոշմամբ կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտնում* ***2016 թվականի սեպտեմբերի 19-ից:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

16 սեպտեմբերի 2016թ.
թիվ 19/9-Լ
ք. Երևան